«Ա. Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն» ՀԿ
Общественная организация “Армянский центр защиты прав человека им. А.Д.Сахарова”
"The A. D. Sakharov Armenian Human Rights Protection Centre'' Non governmental organization

ՀՀ, 0009 ԵՐԵՎԱՆ, Սարմենի 1 1 Sarmen St., 0009 YEREVAN, ARMENIA РА, 0009 ЕРЕВАН, ул. Сармена 1
(37410) 54-29-36, 58-78-64, 56-15-05 Fax: (37410) 561505 e-mail: sakhfd@arminco.com , www.sakharovcentre.org

05 նոյեմբերի, 2010թ. **Ե-1790**

ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ
ՊԱՐՈՆ Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովսեփյան

Ծանոթանալով ՀՀ գլխավոր դատախազության կողմից մշակված և շրջանառության մեջ դրված «ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի հետ, հայտնում եմ հետևյալը.

Նախևառաջ, ողջունում եմ ՀՀ քրեական օրենսգրքում բարեփոխումներ կատարելու ՀՀ գլխավոր դատախազության օրենսդրական նախաձեռնությունը: Սակայն, մարդու, մասնավորապես կանանց և երեխաների, իրավունքների ու շահերի պաշտպանությամբ զբաղվող հասարակական կազմակերպություններս, կարծում ենք, որ ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ գլխով նախատեսված «Սեռական անձեռնմխելիության և սեռական ազատության դեմ ուղղված» հանցագործությունների մի շարք հոդվածների դիսպոզիցիաների ու սանկցիաների /պատժի չափի/ ձևակերպումները պետք է նույնպես վերանայվեն և համապատասխանեցվեն միջազգային չափանիշներին:

Այդ կապակցությամբ այդ շահագրգիռ հասարակայնության կողմից մշակվել և շրջանառության մեջ է դրվել ՀՀ քրեական օրենսգրքի 138-րդ, 139-րդ, 140-րդ, 141-րդ և 142-րդ հոդվածներում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծ, որի վերաբերյալ մեր կազմակերպության կողմից արված դիտողություններն ու առաջարկությունները, նպատակահարմար եմ գտնում ներկայացնել նաև Ձեզ, Ձեր կողմից մշակված նախագծի հետ համատեղ քննարկելու նպատակով:

1.1 Նախագծում, ինչպես նաև գործող ՀՀ քրեական օրենսգրքում «սեքսուալ» բառերը փոխարինել *«սեռական»* բառերով:

1.2 Նախագծի 138-րդ հոդ. «Բռնաբարությունը՝ տղամարդու սեռական հարաբերությունը կնոջ հետ՝» շարադրել *«Բռնաբարությունը՝ սեռական հարաբերություն անձի հետ՝...»:*
Բռնաբարությունը, տեսականորեն սեռական հարաբերություն է /ակտ/ առանց մյուս կողմի համաձայնության /կամքին հակառակ[1]/: Բռնաբարությունը, նախկին խորհրդային պետություններում, այդ թվում նաև Հայաստանում, հասկանում ենք միայն ավանդական ձևը՝ տղամարդու սեռական հարաբերությունը կնոջ հետ՝ նրա կամքին հակառակ: Սակայն գործնականում շատ պետություններում և ՀՀ-ում լինում են դեպքեր, երբ բռնաբարությունը կատարվում է միևնույն սեռի նկատմամբ, մասնավորապես ազատազրկման վայրերում, բանակում և այլն: Այդ իսկ պատճառով էլ, ներկայումս եվրոպական պետությունների և աշխարհի այլ պետությունների օրենսդրական դաշտում «բռնաբարությունը» ընդլայնված իմաստ ու բովանդակություն /դիսպոզիցիա/ ունի, դրա տակ ընկնում են ինչպես տղամարդու սեռական հարաբերությունը կնոջ հետ՝ նրա կամքին հակառակ, այնպես էլ կնոջ և կնոջ, տղամարդու և տղամարդու միջև: Եթե Նախագծի 138-րդ հոդ. կատարվի փոփոխություն և նշվի ոչ միայն ավանդական բռնաբարությունը, այլ նաև «միևնույն սեռի նկատմամբ կատարված բռնաբարությունը», ապա ինքնըստինքյան «համասեռամոլություն» բառը դուրս կմղվի /կվերացվի/ գործող օրենսգրքից և Նախագծի 139-րդ հոդ. 1-ին մասից, ինչը մի քանի իրավաբանների և փորձագետների մտահոգում էր «համասեռամոլություն» բառի դուրս մղումը /վերացումը/ ՀՀ քրեական օրենսգրքից:

1.3 Նախագծի 138-րդ հոդ. 3-րդ մասի 1-ին կետում «տասնչորս տարին չլրացած անձի» փոխարեն շարադրել *«փոքրահասակ»* բառով[2]այսինքն մինչև 14 տարեկան /սեռական հասունության չհասած անձ/ կամ *«մինչև տասնութ տարին չլրացած անձի» բառերով:* Հարկ է նկատել, որ նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով արդեն իսկ նշված է «անչափահասի նկատմամբ», միգուցե *այդ կետը հանվի:*

---

[1] Շատ հաճախ բռնաբարությունը զուգորդվում է ֆիզիկական ուժի գործադրմամբ կամ դրա սպառնալիքով, կամ հոգեբանական ճնշմամբ՝ առանց ֆիզիկական ուժի գործադրմամբ: Այդ դեպքում, շատ հաճախ օգտագործվում է տուժողի կախյալ վիճակը բռնաբարողից. օրինակ՝ տնտեսական, սոցիալական, հոգեբանական: Հնարավոր է տուժողի անօգնական վիճակն օգտագործելով. օրինակ՝ անգիտակից վիճակը, ալկոհոլի, թմրանյութի ազդեցության տակ գտնվելը, հոգեկան խանգառում կամ հոգեպես անհավասարակշիռ վիճակում գտնվելը:

[2] «18 տարին չլրացած» ասելով, հասկանում ենք անչափահաս, երեխա /ՀՀ քաղ. օրենսգիրք, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք, «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ կոնվենցիա/:

1.4 Նախագծի 138-րդ հոդ. 3-րդ մասի 2-րդ կետում «ծնողի, մանկավարժի կամ այն անձի կողմից, ում վրա դրված է երեխայի դաստիարակության պարտականություն» փոխարեն շարադրել «*ծնողի, որդեգրողի, խնամակալի, հոգաբարձուի և մանկավարժի*» բառերով:

Ճիշտ է «որդեգրողը» ծնող է համարվում, բայց նրա կողմից որդեգրվածին բռնաբարելու դեպքում, պետք է նախատեսվի խիստ պատիժ, հատկապես եթե տուժողը անչափահաս է եղել: Քանի որ այդ դեպքում կարող ենք ասել, որ նա երեխային որդեգրել է՝ սեռական շահագործման ենթարկելու նպատակով կամ վերջինս եղել է պեդոֆիլ /սեռական հարաբերություն փոքրահասակների հետ/ և նրա պեդոֆիլ հանդիսանալու հանգամանքը հայտնի չի եղել պետությանը: Այստեղ էլ տեղին է նշել, որ պետք է խստացնել նաև երեխաների որդեգրման կարգը մեր հանրապետությունում, նման դեպքերում ավելի տեղին կլիներ որդեգրողի համար նախատեսել հատուկ առանձին դրույթ՝ քրեական պատասխանատվության ենթարկելու մասին: Այդ դեպքում՝ կլուծենք նաև երեխաներին թրաֆիկինգից զերծ պահելու և պաշտպանելու հարցերը:

1.5 Նախագծի 139-րդ հոդ. 1-ին մասում հանել «համասեռամոլություն» բառը, քանի որ համասեռամոլությունը դա գործողություն չէ, իսկ անձը քրեական պատասխանատվության է ենթարկվում որևէ հանցավոր արարք կամ գործողություն կատարելու համար, այլ ոչ թե ով լինելու համար: Փոխարենն առաջարկում եմ շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ *«Արվամոլական կապը, եթե կատարվել է ֆիզիկական և հոգեբանական բռնություն, սպառնալիքներ գործածելով, կամ անչափահասի նկատմամբ, կամ տուժողի կախյալ վիճակն օգտագործելով» /տես նաև 2.2 կետը/:*

1.6 Նախագծի 139-րդ հոդ. 3-րդ մասի 1-ին կետում ևս նշել *«փոքրահասակ երեխայի նկատմամբ» կամ «մինչև 18 տարին չլրացած»,* իսկ 3-րդ մասի 2-րդ կետում՝ «*ծնողի, որդեգրողի, խնամակալի, հոգաբարձուի և մանկավարժի» բառերով:*

1.7 Նախագծի 140-րդ և այլ հոդվածներում պետք է աշխատել խուսափել *«համասեռամոլություն»* բառն օգտագործելուց, այն արարք կամ գործողություն չէ: Բացի այդ, լրացուցիչ հայտնում եմ, որ Հայաստանի դիմումը Եվրոպայի խորհրդին անդամակցելու վերաբերյալ Եվրոպայի խորհրդի թիվ 221 /2000/ կարծիքի՝ (III գլխի /ա/ ենթակետ) Հայաստանը անդամակցությունից հետո վեց ամսվա ընթացքում ընդունելու է քրեական օրենսգրքի 2-րդ /հատուկ/ մասը, որով դե յուրե կվերացնի մահապատիժն ու կապաքրեականացնի փոխադարձ համաձայնությամբ չափահաս անձանց արվամոլական կապը, ինչն արդեն արվել է:

1.8 Եթե հիմք ընդունենք ՀՀ գլխավոր դատախազության կողմից մշակված նախագծում կրկնակիության ինստիտուտի վերացումը, ապա բոլոր հոդվածներից պետք է հանել *«կրկին անգամ»* բառակապակցությունները:

1.9 Ինչպես Նախագծի 140-րդ, այնպես էլ այլ հոդվածներում շարադրել «*ծնողի, որդեգրողի, խնամակալի, հոգաբարձուի և մանկավարժի» բառերով:*

1.10 Նախագծի 141-րդ հոդ. «ակնհայտ տասնվեց տարին չլրացած անձի հետ» բառերը շարադրել «մինչև տասնութ տարին չլրացած անձի հետ» բառերով, «ակնհայտ» ասելով ինչ ենք հասկանում, կարծում եմ ավելորդ բառ է:

1.11 Նախագծի 141-րդ հոդ. 3-րդ մասի 3-րդ կետում՝ նշված է «12 տարին չլրացած անձ»: Հարկ եմ համարում նշել, որ օրենսգրքում տարբեր տարիքներ նշելը խառնաշփոթ է առաջացնում և չի բխում «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ կոնվենցիայի, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված /հհ. 29 և 30/ պահանջներից:

1.12 Նախագծում հաճախ օգտագործվող «14 տարին չլրացած» բառերը փոխարինել *«փոքրահասակ» կամ «18 տարին չլրացած»* բառերով: Այս դեպքում առաջարկում եմ պատժի մասը խստացնել, եթե հանցավոր արարքը թույլ է տրվել անչափահասի նկատմամբ, պետք չէ տարբեր տարիքներ նշել՝ 12, 14, 16, 18 և այլն, դա նույն է ինչ ասենք 30, 45, 60 տարին լրացած:

1.13 Նախագծի 141^1-րդ հոդ. ձևակերպումն անհասկանալի է և մոլորեցնող, կարելի է շարադրել *«տասնութ տարին չլրացած անձի կողմից»* կամ այն վերախմբագրել:

Ակնկալում եմ նաև ստանալ Ձեր արձագանքը սույն առաջարկությունների վերաբերյալ, որի համար կանխավ շնորհակալ եմ:

Կից ներկայացվում է՝

1. ՀՀ քր. օր. 18-րդ գլխում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագիծը:

ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ
Տնօրեն

Կատ. Մ. Խաչատրյան
հեռ. 587864